



ԱՐԾՈՒՒ

ՎԱՐՊՈՒԿԱՎՈՒՆ

ԹՈՌՈՒՅԵԼ ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ԹԵՒՕԲ
ՅԱՐԾՐԱՒՆԻ ՄԵՆԱՍՏԱՆԻՆ ՎԱՐԱԴԱՅ
ՈՐ Ի ՎԱՆՏՈՍՊ

Ա. ՀԱՆԴԻՍ ԱՌՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ
ԵԿԵԼԵՑԱԼԵՆ ՀԱՐՑՆ

ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ ՀԱՆՇԱՐՈՒՄԵՍ ԹԱԳՄԱՆԻՉ
ՀԱՅԱՅԻ ԴՊՈՒԹԵԱՆ

Եթե զԼուսաւորէն Գրիգորիոս համարիմք դոլ յետ թա-
դէտի երկրորդ ճարտարապետ ներդիչ Հայկական եկեղեց-
ւոյն եւ ամայութեամբ խողանաղեալ Այգւոյն Այրարատոյ
քրանահոս մշակ աշխատասէր հանդուձեալ նմին հոյն որդիք
եւ թողունք իւր ոմն տնկիչ եւ ոմն դարմանիչ Հայկապոյ

1853 Յուլի 10. 6

բոլ նորատունի որդւոց եւ ծառոց զինչ ապա համարեցուք զԻսահակ եւ Մեսրոպ . եթէ ոչ նոր եւս հրաշալի Հայազն Ասողոսք առատահոս գետովք Հայացի գեղեցիկ դպրութեանց ոռոգողք եւ արբուցիչք Այրարատայ մատաղ որւոց եւ նոր իազողութիւն բարունակաց : Արդարեւ Գրիգորիոս, Արիստակէս, Աղդանէս, Յուսիկ եւ մեծն Ներսէս նման վեհին Պօղոսի իբրեւ իմաստուն ճարտարապետ նոր հիմնարկիչ եղեն Հայաստանեայց եկեղեցւոյն պետմբ եւ նահաւտակութեամբ իբրեւ քարինք աւելք տալեալք պէս պէս չարչարանօք 'ի Մասեաց Լիբանանէն թաւալեցան 'ի հիմն նոր Սօղոմոնեան Տաճարին . այլ ճիւղ եղեն, որ մինչեւ ցերկինս բարձրացուցին զչինուածն . եթէ ոչ Իսահակ եւ Մեսրոպ պանչելի թարգմանիչք Աստուածաշունչ մասենից եւ ոսկեփայլ տառիւ քարանց Հայակոս դպրութեան՝ վայելչապէս զարդարիչք նոյնի եկեղեցւոյն :

Այլ աստ ճահողացոյն թըռի կարգաւ հանդիսացուցանել զայս երկու հրաշագործ զբարաց զիմաստութիւն եւ զարդասիս Հայրենասէր առաքինութեանց սոցին . որովք քան զհրաշալի Հայրապետս եկեղեցւոյ՝ եւս հրաշագոյն դոտան բազմադիմի մասամբք մեծաշահ առաքինական գործոց եւ ըտաղանդն Քրիստոսաւանդ շնորհաց կրկնակի շահեցուցին արկեալ 'ի միտս Հայկածին մանկուոյն իբրեւ 'ի սեղանաւորս՝ բազմապատիկ շահեկանութեամբ աճեցուցին եւ դոտան հաւատարիմ եւ ժիր սպասաւորք Քրիստոսի եկեղեցւոյն :

Պարթեւ եւ մեծն այն Իսահակ գոլով հարազատ որդի Ներսիսի աշխարհազարդ շօրն՝ արդարեւ զնորին առաքինութեան ճշգրտատիւ պատիեր յանձնն երբն, նովին Աստուածապաշտութեան հանդիսիւ փայլեալ նովին հայրենասէր բարոյիւք զարգացեալ, նովին եկեղեցաշէն գործովք գերազանցեալ . այլ մասամբք աղօթից եւ ճգնողական կրթութեանց՝ ոչ միայն քան զհայրն, այլ եւ քան զյոգունս առաւել գլուխալ՝ որ ըստ պաամելոյ Կորեան եւ Մովսիսի աշակերտացն, եթող զհայրենի տուն եւ զբազմաշահ կալուածս . ստացաւ

ընդ նոսին զաշակերտս վաթսուն , համայն աշխարհուրացք , համայն խաչաքարձք , համայն խարազանազգեստք , երկաթապատք եւ բոկագնացք : Այսպիսի անդէն եւ անթոշակ զինուորաց ինքն իբրեւ զօրագլուխ կացեալ՝ նոքօք շրջէր 'ի Հայաստանեայց սահմանս իբրեւ Առաքեալ եւ պաշտօնեայ Աւետարանին . քարոզէր , յորդորէր , կարգէր եւ յօրինէր զեկեղեցական բարեզարդութիւնս , նոր ոմն Պօղոս եւ Տիմօթէոս 'ի Հայաստան երեւեալ , թէ որպէս պարտ է 'ի տան Աստուծոյ շրջիլ , որ է եկեղեցի : Ի ձեռն առեալ զիմաստից եւ գիտութեան լուսապայծառ ջահ՝ նովինք զգիշերապատ խորշս հայրենի տան լուսաւորէր եւ 'ի բաց փարատէր ընտրիտութեան մահաշուք ստուեր :

Այսպիսի անդուգական առաքինութեամբ իսկ արժանի լինէր ծառանգել զհայրենի քահանայապետութեան բարձրագահ աթոռ իբրեւ յարմատոյ Լուսաւորչեան վերջին ընտրելագոյն շառաւիղ , վերջին օրհնութեան զաւակ , վերջին անուշահոտ ծաղիկ , վերջին արգարութեան պտուղ :

Սինչ ամբառնայր յաթոռ հայրապետական երանելին Իսահակ , գոգթէ իբր պայծառ արեւ նորաճագ յարեւելեան հորիզոնէն բարձրացեալ ծիրաներփեան նշուլիւք համատարած ճառագայթէր զՀայկազանց համայն աշխարհաւ եւ առ հասարակ լուսաւորէր զմիտս մանկանց եկեղեցւոյ , որ անուսումն գոլով՝ տգիտութեան խաւարաւ նսեմացեալ էին : Որչափ մեծին Գրիգորի ջանք եւ ճգունք էին Աւետարանին եւ հաւատոյ լուսով զօրդիս Արարատեան որդւոց լուսաւորել եւ 'ի կռամոլ հեթանոսական կաշկանդօղ խաւարէն արձակել եւ հանել 'ի լոյս Աստուածգիտութեան , այնչափ եւս պարթեւին Իսահակայ սիրելի եւ փափագելի էր զհաւատով լուսաւորեալ մանկունս Հայաստանեայց եկեղեցւոյ , իմաստիւք մտաց եւս լուսաւոր առնել ըստ Սօղոմոնեան խրատուն զոյանկալի իմաստութիւն իբրեւ քոյր գրել եւ կապիլ ընդ նոսին , զհանձար եւ գիտութիւն ազգակից եւ ծանօթ առնել հեռացեալ օտարայեւոյն 'ի նմանէ , 'ի զարգ անկողոյս :

տելի պճճել եւ պսակել զմերկալանջ պարանոցս Հայագն երիտասարդաց ոսկեհիւս ականակուռ մանեկաւ իմաստութեան :

Նախնի սուրբ սքանչելագործ հայրապետք գոգթէ իբր ընդ աղօտ զլոյս Աւետարանին ծաւալեցին 'ի Հայաստան : Իսահակայ պահեալ էր միայն իբրեւ հրահանգիչ դատարար եւ հոգեհանձար վարժապետ՝ թարգման լինել բարձրագոյն մը տաց Քրիստոսախօս Աւետարանին, զկրկնակի տախտակ Աստուածաշունչ տառից տուեալ 'ի ձեռս մանկանց դասախօսել ընտանի եւ ճոխագոյն բարբառով. զմուրացածոյ լեզուս Յուսականին եւ Ասորոյ՝ տալ մոռանալ եւ միայն մարգիլ եւ վարժիլ հայկականին պերճախօս դպրութեամբ :

Թողումք աստեօր, որ ինչ առ հայագիր դպրութիւնս վերածին 'ի ճառն Մեսրոպեան . Իսահակայ պարթեւին հայրենասէր ոգւոյն, երկայնամիտ համբերութեան, ներողամիտ վեհանձնութեան, հայրագործ սրտին զանհամեմատ ձիրս հռչակեցից : որովք իսկ վեհ եւ սքանչելի ցուցաւ նա. քան զբազումս եւ եղեւ ոչ միայն հայր եկեղեցաշէն, այլ եւ հայր հայրենաշէն եւ հօր պաշտպան Արշակունեան թագաւորութեանց :

Այն ինչ նախադարձ հայոց զատեան կազմեալ՝ ոչխոհմաս, դոյն ծերոց հասունացեալ հանձարով. այլ տհաս մանկութեան սակասամիտ խելօք . զխորհուրդ յիմարութեան 'ի մէջ բերելով՝ իբր այն. թէ զհայրենեաց շինութեան նորանոր բար, դաւաճութեան հոգայցեն : Չինչ, զառ 'ի վաղուց տնկեալ, անխորտակելի 'ի հողմոց. քաջաբուն արմատովք հաստատեալ քաղմաստեղնեան ածիննաճիւղ ոստովք մինչեւ ցերկինս բարձրացեալ 'ի միջակին Արարատոյ, զ Արշակունեան. զծառն, որ զօրացեալ էր իշխանութեամբ, աւանդ հատանել կամէին վատախորհուրդ մտօք. զանիրաւ, աշխարհակործան խնդիր 'ի դռնն պարսկց տալ եւ զԱրտաշէրն 'ի բարձրութենէ արքայական դահուն ոտնահար անարգութեամբ 'ի վայր գլորել անարգանօք, իբրութի ինքեանք պատուիրանապահ գործ եւ նախանձաւորք օրինացն Աստուծոյ, չկարեն ժուժել եւ տանել ան-

արժան գործոց Արտաշէրի : Ուստի միաբան հաւանութեամբ
խորհին , հաւանին , վճռեն եւ վաղվաղակի զխնդիրն , որ կո-
րուստ էր անձանց իւրեանց յատեան Պարսից հանել կամէին
եւ ստիպէին զերանելին իօհանէ յարգել զայս խնդիր վաւե-
րական Վիքով Սաթուղիկոսութեան :

Իսկ նա զինչ , ես բնաւ , ասէ , չհաւանիմ այդմ ձերոյ վատա-
միտ կորստաբեր խորհրդեան եւ ինձ անհնարին է փոխանակել
զիմ հեղաբարոյ մոլորեալ զառն ընդ կատաղի դազանին , զազ-
գակից համարիւն ընդ անձանաչ օտարին , զընտանին հարազատ
զՀայն ընդ մայրագ պարսկին , զակն տղմով մեղաց տգեղացեալ
եւ զմարգարիան միճոտեալ ընդ անարդադոյն քարին : Զի է
այդ , նախարարք Հայոց , ընդէր այդչափ անմտանայք եւ կա-
մովին կոչէք զմահ անձանց ձերոց . զԱրշակունեան արեւ մը-
թացուցեալ խաւարի ածէք աշխարհիս Հայոց եւ զաչս նա-
խատեսութեան ձերոյ կուրացուցեալ զաղէտ ապագայ ժա-
մանակին չկարէք այժմէն տեսանել : Ինձ քաւ լիցի երբէք
հաղորդիլ այդմ մահագոյժ խորհրդեան . ո՛հ վաղաժամ բառնալ
զկեանս յերկրէն Հայոց Արշակունեան թագաւորութեանց :

Այլ յաւէտ քաղցր եւ սիրելի է իմ հայրագործով սրտիս
յուսով առողջութեան եւ խրատութեան համբերութեան դարմա-
նել եւ յանձանձել զիմ ակտացեալ ոչխարն եւ ոչ ըստ ձերում
տիրանենգ եւ տիրադրութ խորհրդեան փոխանակել անմտո-
թեամբ ընդ առողջ գազանին , որոյ առողջութիւն իսկ հիւ-
անդութիւն եւ Մահ է աշխարհիս Հայոց : Ո՛վ Աստուածա-
գութ սրտին իօհանայ . արդարեւ նոր ուն Սամարացի յԱյ-
րարատոյ սահմանէն անցեալ տեսանէ անդանօր զանառակն
Արտաշիր , ոչ յանցս ճանապարհաց , այլ ՚ի վերայ բարձր ան-
մատչելի աթոռոյն Արշակունեանց՝ կենդանւոյն վիրաւորեալ .
ոչ իբրեւ զՓեննէհէսն այն սրտմտեալ ՚ի նախնաձ օրինացն
Աստուծոյ , աշտէիւ սատակէր կամ հատու սրով նշովից ՚իբաց
հատանէր ՚ի միութենէ եկեղեցւոյն . այլ Քրիստոսեան սիրով
երկայնամտեալ մատչէր ՚ի կարիս անկեղոյն դեղ եւ պատան
քաղցրամոք խրատուց արկեալ զնովաւ խնամէր ծածկաբար :

Այլ ուշակորոյս նախարարքն ապստամբ մտօք ստուռդ անեցան
 'ի խրատուէ Սրբոյն, ոչ միայն զԱրտաշիրն՝ այլ եւ զերանելին
 Իսահակ յիւրական ամօռոյն 'ի բաց վտարեալ վարեցին մին-
 չեւ ցդուռն Պարսից ուրանօր հրաշարի ստենախօտութեամբ
 զարմացոյց զանարժան ատեան Պաքսից զՔրիստոսական կրօնին
 ճշմարտութիւն բարձրաբարբառ բարոյելով պաշտպանեաց
 զախտացեալ ոչխարն իւր Արտաշիր որ 'ի յատեան գայլոց ան-
 օգնական մնացեալ՝ յիւր խկ խբախճանակից բարեկամ նախա-
 րարաց դատաւիւտ լինէր առաջի հրապաշտ անատուծից. ուր
 թէպէտ 'ի Սուրեն պելհաւիկ ազգակից նախարարէն բազում
 պարգեւօք խտտմանց ողորեալ լինէր միաբանիլ ընդ նախարարս
 Հայոց դատապարտել զարքայն Արտաշիր. այլ զ՞ հնար էր ճշ-
 մարտութեան հաւատարիմ աշակերտին ամաչել յատենի եւ
 յեսել զվկայութիւն ճշմարտութեան : Աւտի 'ի բաց զմեծա-
 մեծ պարգեւսն արհամարհելով յաղթանակաւ արդարու-
 թեան պարծանօք ելանէր յատենէ անախ, դարձ առնէր անդ-
 րէն 'ի հայրենին լի տրտմութեամբ եւ հառաչանօք, լին ժուժ-
 կալութեամբ միայնացեալ 'ի տան, տուգ առնոյր 'ի վերայ թա-
 փուրացեալ զահուն Արշակունեան եւ միանդամայն 'ի վերայ
 փեսայազուրկ սյրիացեալ առագաստին եկեղեցւոյն Հայաս-
 տանեայց, որում Սուրմակն այն փեսայանալ կամէր իբլ եւ սե-
 ղելս դադասգողի մտեալ յառազատ անարատ հարսին : Երեքին
 օտարախորթ եկամուտ փեսայք Սուրմակ, Բրբիշոյ եւ Հմուէլ
 իբրեւ հարազատ որդիք Գրիգորի ժառանգորդ կամէին լինել
 նորին բարձրագահ Աթոռոյն. այլ Հարսն անպատքօղով ան-
 տեսութեան պատապարեալ զինքն 'ի նոցին անարժան զուգու-
 թենէն գանձկալի փեսայն իւր զԻսահակ միայն ինդրէր. ընդ-
 որ կապեալ էր անքակտելի Քրիստոսական սիրոյն հանգուցիւ :

Ազգայր համօրէն Հայաստան, որդիքն իւր անմխիթար յոյ-
 ին, գրուեք դարոցաց առ հասարակ փակեալք : Մտեան
 Ատուածաշունչ զող թէ զուռնեանց Երասխայ կախեալ լի-
 նէր, ո՞ 'ի փայր առնոյր եւ վերձանէր զնոսին, ո՞ թարգմանէր եւ
 հրաշարի ատուածարանութեամբ բացատրելով ուսուցանէր

անհմուտ Ժողովրդեան : Բաջարթուն անձնադիր հովիւն Իսահակ զիւր հովուական սգաճայն սրինդն առեալ նստէր իբրեւ անծանօթ յանկեան միոջ Այրարատայ դաշտին փողէր եւ հառալանօք ողբայր 'ի վերայ հայրամերժ իշխանաց :

Իսկ անհովիւ հօտն Թափառեալ անառաշնորդ 'ի միջնախորհրէրանց եւ դաշտաց , 'ի դաշտաց եւ 'ի գողաց ափշտակեալ . ոչ 'ի ջուրս եւ յարօտս Աստուածային տածեալ եւ ոչ յանմատչելի փարախ եկեղեցւոյ պատսպարեալ . այլ բացօթեայ անտէրունչ սստ եւ անդ ողբաճայն բառաչա արձակելով զ Իսահակ որոնէին եւ ընդ գտանէն իբրեւ 'ի յաղն դիմէին միահամուռ բազմութեամբ . որդիք Հայաստանեայց , որք գրեթէ առ հասորակ յերեսաց անգգամ նախարարաց տգիտութեան անհամութեամբ նեխեալք , լքեալք եւ տարախուսեալք կային : Եւ նոքին իսկ ապաշնորհ իշխանք նովին անհամութեամբ նեխեալք յանարժան երկց Աթոռակալացն անտի , կարի յոյժ սորջանային , յոգւոց հանէին , հառաչէին եւ կորագլուխ ամօթապարտ յոտս Իսահակայ դիմեալք , կրկնէին զմեղայն զանաակ որդւոյն : Հայր , հանդերձիչ եւ բարեղարդիչ եկեղեցւոյն Հայաստանեայց . մեք արդարեւ յիմարեցաք , անմտացաք եւ խոտան գտաք . առ 'ի որդիասէր Հօրեգ . աստամբելով չորաք առ օտարսն . զքաջ հովիւդ Թողլով՝ զկեղեքիչ յափշտակողս ընտրեցաք . որ զինչս մեր համակ վատնելով՝ արար զմեզ խոզարածս . եւ աւասիկ սովամահ լեալ դարձաք անդրէն առ հայրենի սեղանդ լիախորտիկ . տուր մեզ քաղցելոցքի կշտալինդ վայելել եւ յագենալ 'ի յաւիտենական բանեդ Աստուածախօս քարոզութեամբ . լեր կրկնակի Հովիւ Թափառեալ հօտիդ , խոտանալք այսուհետեւ յօժարութեամբ հետեւիլ լուսաշաւիղ հեռոցդ :

Որդիք եղջերիկք , խեթկողք եւ անհաւանք ծնողաց , ընդ յաճախել ցաւոց եւ բազմագիմի նեղութեանց հասելոց 'ի գլուխս ձեր ապստամբ՝ վաղվաղէք այգպէս այժմ զ Իսահակ խնդրել . ասեմ ձեզ , զի տէր եցոյց ինձ . այլ եւս չէք դուք արժանի տեսանել ոչ զ Իսահակս 'ի Գրիգորեան Աթոռ եւ ոչ

զ' Արտաշէիրն Արշակունեան գահ. զայս երկոսին հաստարմատ հովանաւոր ծառս դուք ինքնին ձեռք ձերովք տապարաւ անմտութեան հատանել ժպրհեցայք . որոց առ մեծատարած հովանեօք պատապարեալք՝ անլախ եւ աներկիւղ բնակելիք . ոչ մեղանչել կարէր ձեզ խորշակ արեւուն հրապաշտոյց եւ ոչ լուսին ցրտահար Յունական գոռոզ ազդին : Դուք որովհետեւ կամովին արտաքս վազեցիք 'ի շքեղ հովանեաց աստի՛ այսուհետեւ զարդիւնս ձեռաց ձերոց կերիջիք . տիրեսցեն ձեզ օտարք . Լքեալ թողցի աշխարհն Արարատեան եւ ըստ գուշակութեան Հօրն իմոյ 'Ներսիսի՝ ազգ 'Նեոտղաց կարկտապէս թափեալ տեղացին 'ի նմա :

Դնացէք յինէն, որդիք հայրադրութք եւ ողորմելիք, զի՞ այլ եւս հնար է ինձ 'ի վերայ տիրաննդ ժողովոդոցդ բահանայանալ . թոյլ տուք ինձ ողբալ զկորուստ աշխարհիս Հայոց եւ մի բռնադատէք զիս մխիթարիլ 'ի վերայ բեկման ժողովրդեան իմոյ, վասն զի զայս աղէտից զանցս յառաջ քան զկոչին իմ յաթող Հայրապետական՝ վերին կանխագուշակ ազդումն եցոյց ինձ ամենայն հանգամանօք :

Բաւական լիցի 'ի մէնջ զյայտաւ եւ եթ հռչակել զհանդէս Աստուածապաշտութեան եկեղեցաշէն Հօրն Խաչակայ . որոյ շնաշխարհիկ վարուց անզուգական առաքինութիւն, գերահանձար մտաց՝ վսեմագոյն իմաստութիւն, ճարտարահիւս մատանց՝ ճշդ արտախօս թարգմանութիւն, Արարատեան եկեղեցւոյ հրաշանորոգ բարեղարդութիւն, Գրիգորեան հօտին անձնադիր հօտասիրութիւն, գերազանց նկարագրութեամբ տեսանի 'ի մատենա հետեւող ձեռնասուն աշակերտաց նորին, Կորեան, Մովսիսի եւ Ղազարու Փարիկեցւոյն . ոյր վասն աւերորդէ 'ի շքեղ տիպս նոցուն՝ դժգոյն նկարս յաւելու :

Ընդ այս Աստուածապաշտութեան Հանդէս Խաչակայ Պարթեւի հօրն՝ հայեցեալ մեր, Հարբ եկեղեցւոյ եւ իշխանք Հայոց, ըստ Պօղոսեան յորդորանաց նմանող լիցուք նորին քաջապինդ հաւատոցն եւ անստգիւտ վարուցն : Ձեզ ասեմ նախ, որոցդ յանձնեալ է եկեղեցին Աստուծոյ եւ ընտրեալ

էք զխտապետ նուազեալ հօտին Հայոց . հանգոյն մեծին խահակտյ նախատես լերուք յաղագս յետագայ աղէտիցն եւ մի լիցի ձեզ ընդ բազմիլ նախադահութեամբ յատեան հայկազն իշխանաց՝ ուշ դնիցէք անխորհուրդ առաջարկութեանց եւ արեալք կամ անհոգութեան կամ մարդահաճութեան եւ կամ գահասէր փառախրութեան գինւով՝ հաղորդ լինիջիք այնպիսումն ազգակործան հայրենամատնիչ ժողովոց . նման Սուրմակայ զքրիստոսական եկեղեցւոյն պատիւ առ ոտն հարկանել յատեան Վարսից , թեկն ամելով աթոռակալութեան չարախօսել զընտրեալ Հայրապետն եկեղեցւոյ առաջի անարժանիցն : Դարձեալ եւ մի նման Բրդիշոյի եւ Շմուէլի՝ ոչ ընտիր շառաւիղ լինելով արժանաւորութեամբ նախնի սրբազանից հարցն, այլ իբրեւ օտարախորդ զաւակ կամ բռնութեամբ կամ խորամանկ հնարիւք եւ կամ յայտնի յափշտակութեամբ ժառանգորդ լինել եկեղեցւոյ հովուական իշխանութեան եւ միայնգամայն վատնիչ դանձուց եւ նուիրական ընչից նորին եւ կամ ըստ քրիստոսեան բանից ծառայ վարձկան լինելով՝ չառնել երբէք փոյթ վասն ոչխարաց, ասեմ ձեզ ոչ խաբըն եւս չլսեն բնաւ այնպիսում օտարաձայն հովուի որ պէս ասէ Տէրն : Քաջ իսկ ճանաչէ հօտն զիւր հարազատ հովիւն եւ զկնի նորին միայն յանձառնու երթալ կամակար յօժարութեամբ : Թէպէտ եւ ըստ խորենեան ողբոյն, բռնութիւն առ ժամանակ մի ՚ի բաց վարէ զփեսայն յառադաստէն եւ զհովիւն ՚ի հօտէն . սակայն ընդ մատնիլն անարատ հարսին ՚ի բռն զող սեղեխին եւ հօտին ՚ի ձեռս յափշտակող գայլոցն՝ իսկոյն յանձին իւրում զգաստացեալ անդրէն զիւր անձկալի փեսայն եւ զքաջ հովիւն խնդրէ . հերքին ամօթով եւ ՚ի բաց մերժին յայնժամ Սուրմակայ, Բրդիշոյի եւ Շմուէլի նման անձնընտիր օտարաձայն հովիւք :

Հայկազուն սակաւաթիւ իշխանք մնացորդք վերջին դարու, որ այժմիկ ՚ի տեղի նախնեացն՝ յատեանս բազմիք հօգալ զազգային իրողութեանց . զգուշացէք եւ դուք ՚ի նոցին անխորհուրդ մեաճութեանց եւ մի լիցի ձեզ ձեռանալ իբրեւ

նախանձաւոր վրէժխնդիր հանգունակ Մարգարէին Եղիայի Աստուածայնոյ օրինացն՝ զմարգարիտ հաւատոյն կամ զարք բռնութիւն Աւետարանին ճշմարտութեան՝ առաջի խառնակրօնիցն արկանել : Զինչ իրաւունս : Համարեցան արդեօք նախարարքն այնորիկ ձեռներեց յանդգնութեամբ իբրեւ իրաւաբան իշխանք եկեղեցւոյ յատեան նստիլ եւ գատապարտել զընկերն կամ հանգոյն հրեական ժողովոյն . իբրեւ թէ 'ի շնութեան ընթանելով զողորմելին Արտաշիր , յատեան՝ աւանդ , ոչ օրինաւոր հօրն Խաչակայ . այլ անօրինացն Պարսկի : Որովք իսկ հակառակս զինեցան ընդ դէմ Պօղոսեան խրատուն զիրս բրիստոնեայ եղբօրն չգատելով առաջի սրբոցն . այսինքն 'ի ներկայութեան եկեղեցական ժողովոյն , այլ առաջի հայհոյող թշնամեացն քրիստոսական կրօնին : Իշխանք , որոց աչք լի էին գերանօք մեծամեծ յանցանաց , զայնս թողնով իբրեւ անբասիրք եւ չքմեղս՝ զԱրտաշիրին հանել ժայրհեցան , եւ այն անիրաւ ձեռօք եւ սայրասուր քաջօք վատ պարսկին , ո՛չ : Խաչակ գորովասիրտ հոյրն ներողամիտ համբերութեան մատամբ Զանայր խոստանայր հանել մեղմով իմն զմեծ գերան յաչացն Արտաշիրի . իսկ նոքա փոխանակ ունկն մատուցանելոյ բազմաշահ բանիցն՝ յաւէտ եւս խաժողութեամբ գթամեակէք՝ ընդ բարձ ածին զ Արտաշիրն յատեան հրապաշտ ժողովոյն 'ի գրգող բազկէն Խաչակայ բռնաբար կորզեալ . եւ անդ յամենայն կողմանց սրաժանի ճանկս գաղանաբար յաչս զժբախտ ուղորմելոյն մխեալ բարձրաձայն բռնողքմամբ՝ այն ինչ հանել կամէին զգերանն , աւանդ եւ զաչս խաչաւ կուրացուցին , ընդ նմին զարեւ ոյայծառ թագին Արշակունեան գիշերապատ խաւարեցուցեալ :

Թէպէտ եւ Խաչակ , որ միակ պաշտպանն էր մեղուցելոյն չհանդուրժէր թողուլ զիւր վիրաւորեալ ոչխարն այնպէս անօգնական մասնիլ 'ի ձեռս ռխերիմ գայլոցն . հազա երթայր եւ ինքն զհետ նորին . զի եւ անդանօր պատել Զանայրէ հօրեղ փաստաբանութեամբ զվերս Արտաշիրի . այլ նա որչափ զօրեղ փաստաբանութեամբ զբացեալ վերս ծածկէր պատասխանաց

քծրով՝ նորա յանդուգն ձեռքը՝ իբաց առնելով զայն՝ մերձ
կամարմին խայտառակէին զարքայն Հայոց՝ ի միջի այնքանոյ
մեծաժողով ատենին Պարսից յորմէ հետեւեցան աշխարհիս
Հայոց աղէտը մեծամեծք . ի վայր անկաւ բաղմադարեան
գահն Արշակունեան, երկիրն անխնայնացաւ : տիրապետեցին
օտարքն . որ օրհուրմամբն արդարոց Ներսիսի եւ Խաչակոյ
բարձրանայր Հայաստան Արշակունեան հզօր թագաւորու-
թեամբ եւ հայրապետական գաւաղանաւն Գրիգորի՝ ոհ ,
յերթեցունց միանգամայն զրկեցաւ ի պակասիլ օրհնութեանց
Աստուածահաճոյ Արդարոյն :

Հապա իշխանք Հայոց , ուշադիր լերուք , այս յիշատակ
սգապատում արձանագրութեանց առաքինի հօրն Խաչակայ
եւ հակառակող անողըք նախարարացն՝ կրկնակի ձեզ ի խրատ
աւանդեցի աշխարհաւթաիջ թեւօք իմ հայրենասէր Արծուոյս .
մի եւ մի երբէք լեզանչել այսպիսեօք ի Հարս եկեղեցւոյ ,
որպէս երբեմն հրէական ժողովուրդն ի յօծեալն Աստուծոյ
եւ ի մարգարէսն . այլ յամենայնի հնազանդ ցուցանել զան-
ձինս առաջնորդացն եկեղեցւոյ . մի ժողով անիրաւութեան
կաղմել , մի զհաւատակից ընկեր առաջի անհաւատին բազ-
մադիմի բարուրանօք չտրախօսել . մի ի շահ բաղաքական օգ-
տի զեկեղեցին Քրիստոսի աղքատացուցանել ի հոգեշնորհ
տնտեսաց եւ յիմաստուն առաջնորդաց իւրոց . մի զանարգն
ընդ պատուականին , զիմաստուն ընդ տգիտին , զօտարն ընդ
ընտանւոյն , զքաջ հովիւն հօտասէր ընդ յափշտակող վատին
փոխանակել անմտանայք , որպիսեօք զանհամեմատ հայրն Խա-
չակ պարթեւ ընդ Սուրմակայ եւ յաջորդացն անպիտանից :
Եթէ արդարեւ նոցին յիմարութեան գինւով եւ դուք ար-
քենայք՝ զնոյն արհամարհանս նախատակոծ արձանագրու-
թեանց ձգէք յանձինս ձեր յորդուոց յորդիս եւ լինիք առիթ
մեծի զայնթաղուրթեան յորժամ անազգընտիր Շմուկէք փո-
խան Խաչակայ տիրեսցեն եկեղեցւոյ եւ ընդ Աստուածա-
պաշտ , երկիւղած , հայրենասէր իշխանացն՝ տիրեսցեն ման-
կունք , խաղճայր եւ շահախընդիրք անձանց : Որովք իսկ

չարչարէր եւ անտէրունչ թողոյր զազգն իւր Սուրբ : Աստուած, որ 'ի հատուցումն ապերախտ ժողովրդեանն Իսրայէլի՝ զայս արդար վրէժխնդրութիւն եւ եթ 'ի ձեռս առնոյր բառնալով զընտիր ընտիր իշխանս եւ հովիւս եւ քահանայս եւ մարգարէս 'ի նոցանէ մատնեալ զնոսին 'ի ձեռս խտասիրտ անողորմից . որպէս զի առ նեղութեան իւրեանց յողւոյ հանեալ՝ յուշ անիցեն զերախտիս բարեաց ընտրելոցն Աստուծոյ, որոց 'ի ձեռն իսկ այցելութիւն լինէր նոցա :

() 'ն ուրեմն, իշխանք Հայաստան աշխարհի, սիրեցէք զարդարութիւն , որ յԱստուածուստ անտի դասիչ կարգեալ էր լբեալ ժողովրդեան միոյ . այնպէս ախորժեցէք , այնպէս ընթացարուբ , զի եւ ձեր յիշատակ յակամջս ապագայիցն ըզձալի լիցի եւ մի եւ դուք նման նախկին ձեռնէրէց նախարարացն զանխորհուրդ ժողով կազմեալ հայրենագաւ լինիջիք եւ մերժիցէք զայնս . որոց հաւատացեալ է եկեղեցին եւ աշխարհն Հայոց , որով եւ յիշատակ ձեր զգուեցի լիցի 'ի բերանս վերջածին որդւոց հայկազնեան :

ՆՈՐԱՎԱՌՈՅՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԺԱՌԱՆԴԱՒՈՐԱՅ

Ի ԿԱՐԻՆ

Դեղեցիկ կը խօսի Սողոմոնեան հանճարը , թէ « Համբաւ բարի պարարէ զոսկերս » . ստեւ կամի թէ այնչափ զօրաւոր եւ ներգործող է բարւի համբաւոյն ազդեցութիւնը, մինչեւ մարդոյս թանձր մարմինէն եւ խիտ խիտ ջիղերէն անցնելով ներքին պինդ ու կարծրանալով ոսկորներուն մէջը կանցնի ու միանգամայն կը պարարէ զանի, ինչպէս ջուրը ծառատունկներուն տակէն անցնելով բոլոր ճիւղերը կը զուարթանան եւ կուռ ճանան : Թէպէտ եւ իմաստնոյն միտքը այլաբանօրէն խօսելով ոսկորներուն պարարման օրինակաւ , կիճացնէ մարդոյս բուն

ներքին զգացումն . այսինքն սրտին ուրախութիւն , մասց զուարթութիւն եւ հոգւոյն հրճուանք երբոր բարի համբաւոյն սուրհանդակ ականջներու դրանէն արագապէս դէպ 'ի ներս կը վազէ :

Արդարեւ բոլոր հայկազանց չորքած ու ցամբած ոսկորներու համար՝ ինչ ուրիշ զօրաւոր բան մը կայ որ զանի կրկին անդամ կանանչացնելով դալարացնէ . բայց թէ միայն բարի համբաւներուն վտակները . որոնք երբոր կամ համբաւատու արժանահաւատ բերաններով եւ կամ ազգային լրագրաց եւ մանաւոր նամակաց միջոցով կը տարածին ու կը ծաւալին այն հայրենատէր եւ հոգած սիրտերուն մէջը , որոնց ոսկորները նոյն Սօղոմոնին ըսածին պէս սաստիկ հոգածութենէն ցեցակեր հալուածներու նման հալեր ու մաշեր են :

Ասիս ազգային եւ արժանահաւատ լրագրէն յառաջ թէ մանաւոր նամակներով եւ թէ բերանացի պատմութեամբ՝ Գրիգորիոս Սրբազան վիճակաւոր Աբբ Եպիսկոպոսին գերազանց ազգասիրական եւ եկեղեցաշէն գործի մը ախորժալուր համբաւ տարածուած էր բոլոր վասպուրական դրացի նահանգիս մէջը . որ կարնոյ քաղաքէն իբր ժամաւ մը հեռի Լուսաւորչայ վանքին մէջը նոյն քաջաբեմուն շովիւն ձեռք զարկած է շայոց դաշտաբնակ զառուկներուն համար փարախ կամ մակաղաթեղի մը շինելու . ինչպէս որ յիշեալ լրագիրը կարինէն գրուած նամակին հրատարակութեամբ՝ մանրամասն տեղեկութիւն կու տայ նոյն վանքին ներսգութեան եւ դպրոցին նոր հիմնարկութեան լրացօք :

Արծիւն սլ այս թերթիս մէջը իր հայրենասիրական պարտքը պիտի վճարէ . որուն սիրտ աննախանձ ըլլալով՝ գրեթէ ամէն Ազգասիրաց ոսկորներէն՝ Արծուոյն ոսկերչները աւելի պարարեցան . երբոր սոյն միջոցիս այս տեղաւի լուրը ստոյգ կերպով լեցինք : Արդարեւ Գրիգորիոս Սրբազանին իր մինչեւ ցայսօր ըրած ազգասիրական գործքեր իւր անուան եւ զընտել արժանաւոր պատկեր գովութեամբ հիւսելով կապերեն . բայց այս նոր ձեռնարկութեան գործը , որ չի վկայեր , որ

իւր նախընթաց ամէն գործքերէն գերազանց համարուելով բոլոր ազգայնոց առաջը՝ նոր պայծառ պսակ մը կը հիւսէ իր բարձր Գլխուն այնպէս ծաղիկներէն, որ յաւիտեան ալ չի թառամիր . վասն զի որչափ գերազոյն ըլլայ ազգափրական գործի մը մեծութիւն, արդիւնք եւ նպատակը . այնչափ առաւել պայծառագոյն պսակ կը հիւսէ նոյն գերազանց գործոյն հիմնադրիչ արժանափայլ զընտյն :

Ազգասէր եկեղեցականի կամ առաջնորդի մը իրեն սրբազան կոչման վայելելու գործքերէն ամենէն գերազանց, ամենէն Աստուածահաճոյ, ամենէն ընտիր՝ եկեղեցւոյ մանկանց դաստիարակութիւնն է . ինչպէս որ կը կարգանք պատմութեանց մէջը . որ մեր նախնի Հայաստանեայց եկեղեցւոյ հոյրերը առնոր համար արիւն բրտներէն եւ իրենց մեծավաստակ ջանից աննուազելի արդիւնք մինչեւ ցայսօր եւ յաւիտեան տխրի վայելէ Հայաստան : Եկեղեցւոյ մանկանց կրօնական դաստիարակութիւնը պինդ առաջին ուսմունքն է ամէն տեսակ գիտութեանց կարգին մէջը . առնոր համար երանելին Պօղոս կը պատուիրէ յորդորելով « Կրթեա զանձն բո . Աստուածպաշտութիւն . զի մալ մնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է . իսկ Աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է » , որով կիմացնէ կրօնական դաստիարակութեան մեծ եւ կարեւոր օգտակարութիւն . վասն զի այլ ամէն ուսմունքները մարմին միայն կը կրթեն եւ իրենց օգուտն ալ փոփոխական է եւ առժամանակեայ տեւողութեամբ անկայուն բարիք միայն կը նծայէ մարդոյս . բայց կրօնական դաստիարակութիւնը, որ հոգին կը կրթէ Աստուածպաշտութեան հանդիսին մէջ այնչափ մեծ եւ յաւերժական է իր բարիք որչափ մեծ եւ առաւել է հոգին մարմնէն ըստ Քրիստոսի Աւետարանին : Այս այսպէս ըլլալով՝ կրօնական դաստիարակութեան խնամակալն եւ ուսուցիչն ամէն վարժապետներէն գերազոյն կը հանդիսանայ առաքինեաց կաճառորդներուն մէջը :

Ամենուն յայտնի է որ Հայաստանեայց բրիտոնէութեան

նախնի դարուն ժամանակները երբոր ընտիր ընտիր վարդապետներ ծաղկեցան, հազարաւոր վանքեր շինուեցան . որոնք գրեթէ առհասարակ վարժոցներ էին կրօնական դաստիարակութեան համար : Անոնց ծոցէն դուրս ելան այն պերազանց հանճարաւոր թարգմանիչները եւ այլ եկեղեցաւարդ . սուրբ եւ ընտելագոյն հայրապետներ ու վարդապետները . հրաշագիր մատենից հեղինակներ . անհամեմատ երգոց եւ շարական նայ նուագիչները , հոգեւորւիս եւ աստուածախօս աղօթից յօրինիչ ճգնաղգեսաց հայրերը . որոնք գրեթէ այս վերջին դարուն խիստ նուագելէն շայաստաննայց եկեղեցիէն . ինչու որ այն հազարաւոր վարժոց վանորայք գրեթէ որը աւերակ դարձան , որն ալ թէպէտ մինչեւ ցարդ կանգուն մնացած են . բայց աւաղ , իրենց նախնի դրութենէն ելնելով՝ մէկ մէկ երկրագործութեան աղարակ դարձած են եւ կը ծառայեն միայն մարմնոյ պիտոյից եւ իրենց մէջ բնակող վանահայրերն ալ համարեալ թէ գեղացիի նման աւելի կախորժեն դետին հերկել , տուար , ոչխար դարմանել քան թէ եկեղեցւոյ մանկանց միտքը մշակել կամ թէ գրիչ սիրելով զանազան նորանոր մատենից հեղինակ ըլլալ : Այս բնելով մեր միտքն այն չէ որ մեզի պաշտօնակից վանահայրեր պարսաւենք , հապա շայաստանեայց իւրաքանչիւր գաւառի վիճակաւոր հովիւներու միտք եւ ազգայնոց ոգին կարթնցունեմք , որպէս զի հոգ եւ խնամք տանելով՝ ազարակ դարձած վանորայք վերստին իրենց նախնի դրութեան դարձունելով վարժոցներ շինեն կրօնական դաստիարակութեան համար :

Աստի Արքեպիսկոպոս Սրբազանն արդարեւ մեծ պարծանք ունի բոլոր հայկազանց առաջը . որչափ որ իր ձեռնարկութիւնը մեծ եւ պատուական է եւ երբոր ձեռք զարկած է Զօրաբարելի մը նման Սահակայ . եւ Մեարտիկայ քրտինքով կանգնուած իմաստութեան տաճարը նորոգելու , որ երկար դարէ 'ի վեր քայքայուած անխնամ մնացեր է :

Խարնոյ քաղաքը , որ բարձր շայոց կեդրոնն է եւ միայն

դամայն վաճառաշահ տեղի մը թող ասանկ գիտնան Ազգայինք մեր : որ Լուսաւորչայ վանքին մէջը նոր կառուցուած Ժառանգաւորաց Վարժարանը՝ մեծ լուսաւորութեան ջանք պիտի ըլլայ նոյն վիճակին եւ բարձր Հայոց եկեղեցին կրօնական գաստիարակութեան ճառագայթներով զարդարի : Արմնայ միայն, որ Վաճառաւորէին եւ Սահակայ Բագրատունւոյն պէս ազգասէր եւ առատաձեռն մեկենասներ պատահին Սահակայ եւ Մեսրոպայ ոգւով աշխատող յիշեալ եկեղեցաշէն շուրջին : Վստահեմք ամենայնիւ Արմնոյ համբաւաւոր ազգասէր իշխաններուն վրայ, որ անձնանուէր առաքինութեամբ հանդիսանան այս ազգօգուտ ձեռնարկութեան ասպարիսին մէջը, մեղուներն շահակնդրութեան ոգին, որ վստութեամբ դէմ ելած կը պատերազմի հայրենասիրաց հետը եւ շատ անգամ ալ աւանդ հայկազն իշխանաց հայրենասիրութեան ոգին մեղուներով թող չխտար, որ ընկերին բարիք կամ հասարակաց օգուտը մտածեն. որով ազգին յառաջադիմութեան քայլը օրէ օր ընդարձակելով՝ Հայաստանեայց ամէն սահմանները ուսման տարածութեան երկայնահասակ ձողով չափէ :

Տպարանին հաստատութիւնը կամ գործածութիւնը խիստ դիւրաւ կը յաջողի Լուսաւորչայ վանքին մէջը թէ Գրիգորիոս Արքեպիսկոպոս հզօր ձեռնարկութեամբ եւ թէ Արմնոյ իշխանաւոր անձանց առատանուէր ձեռնտուութեամբ եւ ծախուց կողմանէն ալ շատ դիւրութիւն ունի, ինչու որ մօտաւոր դրացի է իրեն Պոլիս, որով եւ Եւրոպան տպարանին պիտոյքները շուտով փոխադրելու համար : Այս եւ շահաւետ օգտակարութեան համար մեծ եկամուտ մը պիտի ըլլայ այս տպարանը երբոր Արմնոյ քաղաքը Հայաստանեայց շատ գաւառներուն հետը դիւրին միջոցաւ հաղորդութիւն ունի : Ուստի ինչպէս որ ուրիշ տպարանները դիւրաւ կը փոխադրուին, նմանապէս հոն տպուած գիրքերն ալ նոյն յաջողութիւն կունենան, մանաւանդ երբոր եկեղեցական գիրքեր ըլլան եւ դաւառներուն մէջն ալ նախընծայ դպրոցները հաստատուելով :

ԲԱՆԳԻՅԱՆԻ ՀԱՅՐԵՆԱՇԻՆ ԱՌԱՔԻՆԵԱՅ
ԱՌԱՋԻՆ ԵՒ ԲԱՐԵՎԱՐԳՈՂ ՎԱՂԱՐԱՎ
ԱՐՇԱԿՈՒՆԻ ԹԱԳԵՒՈՐ ՀԱՅՈՑ

ՈՒՍՄՈՒՆԻ ԵՒ ԸՆԹԵՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Երբոր պատմութեանց վրայ մտքերնիս պտտընենք ու
քննենք, այնչափ հազարաւոր տարիներէ 'ի վեր եղած զանա-
զան լուսաւորեալ կառավարութիւններուն՝ գիտութիւննե-
րուն ու արուեստներուն ճարտարութիւններուն՝ մէկ խօսքով
բոլոր մարդկային կենաց օգտակար անթիւ բարութեանց վը-
րայ, անտարակոյս այս ամէնուն յառաջադիմութեանց աղբիւր
եւ առաջին պատճառ, ուստի մեծօրութիւնը պիտի գտնանք
ինչպէս որ մարդս ձեռք չունենայ նէ բոլորովին անկարող կը-
լայ դործի մը ձեռնամուխ ըլլալու, աչք որ չունենայ նէ իս-
ւարի մէջ մնալով՝ թէ երկիւրքին երեսը եւ թէ աշխարհիս վը-
րայի եղած հրաշալի արարածներուն վայելչութիւնը ու փա-
ռաւորութիւնը չիրնար տեսնալ ու վայելել, երկբագործ մը
թէ որ գործիք չունենայ չիրնար երկիրը մշակել ու հաց ձա-
րել, ասանկ ալ թէ որ ընթերցասիրութիւն չունենայ այն մար-
դը այն ազգը՝ չիրնար ուսման եւ հետեւաբար երջանկու-
թեան ծառին քաղցրահամ պտուղը վայելել։ Տէրութեան մը
պայծառութիւն ու շուք տուող եւ երեւելի ընողը՝ իր դի-
ւաններուն մատենագրութիւնները եւ պալատականաց ու
ժողովրդոց ուսումնականութիւնն է ասոր ապացոյց՝ օտար ազ-
գայ պատմութիւններուն մէջի գրուածներէն աւելի, մեր
ազգային պատմութեան մէջ շատ հին եւ ընտիր օրինակներ
կրնանք գտնալ ինչպէս որ մեր Խորենացի քաջ պատմագիրը

Վաղարշակայ ուսումնասիրութիւնը , եւ իր տէրութիւնը ու
 ազգը ինչ աստիճան կատարելութեան ու բարեկարգութեան
 հասցունելը , եւ բոլոր տէրութեանց ալ նախանձեղի օրինակ
 ըլլալը կ'ստորագրէ ըսելով . թէ երբոր Պարսից Արշակ Պար-
 թեւաց թագաւորը , բոլոր Ասորեաստանի Հայաստանի եւ Ափ-
 սյի երեւելի մասերուն վրայ քաջութեամբ տիրեց , իր Վաղար-
 շակ եղբայրը Հայաստանի եւ անկէց դուրս անոր բոլորաբեր
 եղող սահմանակից երկիրներուն վրայ թագաւոր դնելով , յոր-
 դոր եւ խրատ աչ տուաւ անոր ըսելով թէ , « Եւ այլ որչափ
 միտք քո եւ քաջութիւն հատանեն , զի սահմանք քաջաց ա-
 յէ զէնի իւրեանց , որքան հատանէ՝ այնքան ունի » քա-
 ջերուն սահմանը իրենց զէնքն է կսէ , որչափ որ քաջութիւնդ
 ու խնամութիւնդ ամէն զօրութեամբ 'ի գործ դնես , այն-
 չափ կը տիրես . ան ալ բոլոր սրտով ու փափագով իր խնամու-
 թեանը համեմատ , տէրութիւնը եւ ազգը բարեկարգել ու զե-
 լով , ամենէն առաջ ազգին հանգամանքները գիտնալ ու զեց .
 թէ արդեօք իր օրով եղած բոլոր նախարարութիւնները
 ուսկից եւ ինչ ցեղէ յառաջ եկած են . նախնիքներին ինչ
 քարք եւ բնաւորութիւն ունին եղեր . մանաւանդ որ քաջու-
 թիւններ յաղթութիւններ ունեցէր են թէ ոչ . ասոնք կը մը-
 տածէր՝ որ չըլլայ թէ վատ եւ անպիտան ազգի մը փայ թա-
 զաւորելով , իր աշխատութեանը ու խնամքին անարժան ցեղ մը
 եղած ըլլայ . Գտաւ կսէ Ասորոց ազգէն Մարիբաս անուանով
 ուշիմ եւ խելացի մարդ մը , որն որ Յունաց եւ Քաղդէացւոց
 լեզուներուն քաջ տեղեակ էր . ընծանելով եւ իր փափագին
 հասնելու եռանդով գրուած ընտիր նամակաւ մը՝ իր Արշակ
 մեծ եղբորը խրիեց , որն որ երբոր կարգաց կրսէ , շատ ուրա-
 խացաւ եղբորը իր սրտին փափաքին համեմատ վարուելուն
 համար , որուն ձեռքը յանցներ էր իր կէս թագաւորութիւնը .
 ասով աւելի համարմունք մըն ալ ռոտացաւ անոր հաւատարմու-
 թեանը վրայ . եւ վառվառն աշխոյժ կերպով մը , հրաման ը-
 րաւ կսէ , որ շուտով մը Նինուէի արքունական դիւանը բա-
 նան , ու Մարիբաս այն տեղը երթայ՝ բոլոր ազգաց համար

ժամանակ աստիճանական յիշատակաց արժանի անդին մարդ
 Կարիաներուն մէջէն՝ Հայոց համար պահուած մասը գուր
 հանէ . եւ ան ալ բոլոր մատենաներուն մէջէն դտաւ ան գիրք
 քը , որուն վրայ Հելլենական գրով գրուած էր : « Այս մա
 տեան հրամանաւ Աղէքսանդրի ՚ի Քաղղէացւոց բարբառոյ
 փոխեալ ՚ի Յոյնն , որ ունի զբուն հնոց եւ պնախնեացն բանս » :
 Այս գիրքը կըսէ , Աղէքսանդր Մակեդոնացի թագաւորին հրա
 մանովը , Քաղղէացւոց լեզուէն Յունարէնի թարգմանուած
 է , որուն մէջ հին նախնեաց դիւցադնական գործոց եւ վա
 րուց պատմութիւնը կը պարունակի : Մարիբաս մկայն մե
 ազգին համար եղած ստորագրութիւնները Յունարէն եւ Ա
 սորերէն լեզուաւ ճշգրութեամբ եւ զգուշութեամբ օրինա
 կելէն ետեւ՝ Վաղարշակին բերաւ , եւ այն հանձարեղ գիւ
 ցազն թագաւորը , իր ունեցած ամէն հնութիւններէն նախա
 պատիւ համարելով , այս երեւելի անգին գոհարովը իր գան
 ձին զարդարելը եւ հարստանալը տեսնալով՝ շատ ուրա
 խացաւ . եւ հրամայեց որ զգուշութեամբ պահուի , եւ մա
 տեն ալ արձանի վրայ դրոշմուի :

Յիրտի՛ ազգին նախնեացը ունեցած քանկերուն Հայկոյ
 Արամայ՝ մեծին Տիգրանայ եւ այլն եւ այլն դիւցազանց ա
 ռաքինութիւններնին կարդալով ու իմանալով , իր փնտածն
 աւելի դտնալուն համար , սիրտը հանդստացաւ ու զուարճա
 ցաւ , եւ հետեւաբար իր խաղաղութիւնը սէրը գութը հաս
 տատելով այս ազնիւ ազգին վրայ , անկէց հտեւ սկսեց ամէն
 զօրութեամբ ու փախաբով , իր հանձարեղ խելքովը եւ իմաս
 տուն կստալարութեամբը՝ թագաւորութեան մը պէտք եւ
 դած վայելուչ կարգեր ու կանոններ հնարել . որոնցմով բոլոր
 Հայաստանը զարդարեց եւ պայծառացոյց . որով թէ իրեն
 ժամանակակից թագաւորաց , եւ թէ իրմէն ետքը եկողներուն
 ընտիր հեղինակ ըլլալէն զատ , մեծին Տիգրանայ գործքերէն
 ալ գերազանցելով՝ իր Արշակ մեծ եղբայրն աւագարմացոյց :

Արդարեւ ոչ թէ միայն խրոստ տալով , հապա գործնական
 կերպով ալ իմաստութիւնը շարունակ աթուակից ըրաւ իրեն .

քին մէջ ըլլալէն զատ, այսու ամենայնիւ՝ չատ մեծամեծ դիւ-
գաղնական քաջութիւններ ընելով՝ բազմաթիւ երեւելի յաղ-
թութիւններու եւս ձեռնամուխ ըլլալէ ետ չկեցաւ : Ինչպէս
որ այն մեծ եւ դառն պատերազմին մէջ հզօր Մարտիրոսիկե-
սին վրայ յարձակած ատենը, ինքզինքը վտանգի մէջ ձգեց . եւ
քաջարագուկ Հայկազունը եւ Սենեքերիմեանը Արծուանման
վրայ . հասած՝ թշնամուցն գաղաթը ջախջախելով , իրեն
հայրենեացը համար ինքզինքը զոհելու պատրաստուող անձ-
նանուէր թագաւորնին մահուանէ սգափոխին . յայտնի է որ
ատանկ հայրենասէր եւ ազգասէր նախապաշտերուն դիմացը
բռնակալ եւ ազգակործան խղամանկ օտարական ողւոր տէր
մէկը ըլլար նէ , հարկաւ ազնուական եւ հայրենասիրտանձ վը-
րէժինդրութեամբ մը՝ սրժանաւոր պատիժ մը պիտի տային
իրեն :

Իսպառ բարեփառ ճշմարիտ ազնուական Քաջախունին Վա-
ղարշակ , ամէնէն աւելի ինքը հեղինակ էր ազգասիրութեան
եւ հայրենասիրութեան . եւ որ եւ լցէ կերպով հայրենեացը
համար անձնանուէր ծառայութիւն ընող՝ելը վարձատրելով
անոնց ամէն մէկուն յարգնալ կը ծանշնար . անոնք ալ հա-
ւատարմութեամբ եւ սիրով իրենց յանձնուած պաշտօնը ա-
մենայն զօրութեամբ ի գործ դնելէ ետ չէին կենար , մանա-
ւանդ որ փառքն ալ իրենց էր՝ երկիրն ալ իշխանութիւնն ալ :
Թէ որ Վաղարշակ այն ուսման եւ ընթերցասիրութեան
սէրը իր ողւորն մէջ չունենար նէ , ինչպէս կարող պիտի ըլլար
այնչափ բարեկարգութիւններ ընելու . հարկաւ միայն ազգին
վրայ բարբարոսութեամբ տիրող բռնակալ մը պիտի ըլլար ,
մանաւանդ որ՝ ազգային պատմութիւնը անմահացընելու հե-
տաքրքրութիւնն ու ջանքն ալ չպիտի ունենար . որով ազգեր-
նիս այսչափ հազարաւոր տարիներէ ի վեր մինչեւ այսօրս եւ
մինչեւ յաւիտեան , իր հնութեան եւ աղնուութեանը ան-
ժրխտելի վկայական մը ձեռքը առած կը պարծենայ , եւ պիտի
պարծի բոլոր ազգաց առջեւ :

Թէ որ այս պատուական անձը , իր ուսումնասիրութեամբը՝

մին պատմած օյտին մէջ տուն շինելու համար՝ թռչնոց թեւերուն ուժովը օդը ելած տղոցը խելքին կը նմանի, որոնք բարձրէն՝ երկրիս մարդկանց քար բերէք, փայտ բերէք կիր աղիւս բերէք կը պօռային որ տուն շինեն : Յիրաւի կան առանկ բնական ձիրքերով զարդալուած հանձարներ եւ սուր յիշողութիւն ունեցողներ, որոնք ուսման եւ ընթերցասիրութեան իրենց մտայր մէջ պաշտօնիք սերմերուն համար պատարաստուած, քարերեր եւ ինչ մշակութեան կարօտ ընտիր հոգ մը կը սեպուին : Թէ որ գրանին բան մը չցանուէին, անոնցմէ բռնակիւքը գեղեցիկ լեռնային ինքնաբոյս վայրի խոտեր, անհոտ բայց դոյնդոյն ձեւաւոր ծաղիկներ կրնան ըլլալ : անկէջ հարկէ բան յառաջ պալու յոյս չկայ :

(Յիրաւի՝ այս ուսման եւ ընթերցասիրութեան, եւ հետեւեալաբար քաղաքակրթութեան յառաջադիմութեան եւ երջանկութեան գիւրին միջոց մը եղաւ, ինչթմեմպերկին հասցուող իւր մտայր՝ մարդկանց օյտին համար ընծայած պըտուղը, որ է տպագրութեան գիւտը . որ աշխարհս երթալով ուրիշ աշխարհի մը փոխարկեց եւ պիտի փոխէ . որչափ երախտագիտութեան արժանի է այս անձը, որուն համար դոհարեղիներով զարդարուած ոսկի արձան մը կանդնեւն ալ քիչ է : որուն դտած գիւտը, երանի թէ դոնէ հազար տարի առաջ եղած ըլլար, որ անոր միջնորդութեամբը ինչ տեսակ ողբալի կործանմանց եւ շարութեանց առջեւը չէր կրնար առնուիլ արդեօք . յայտնի է որ առջի դարերուն մէջ որչափ տաժանելի եւ դժուար էր ընթերցասիրութիւնը, որ գիրքերը ձեռագիր ըլլալուն համար հրեղէն գնով կը ծախէր, որ մէկ գիրք մը գնելու համար շատ առակի կարօտ էր մարդս : մէկ խօսքով, ուսումնական եւ ընթերցասէր ըլլալը ասիցի ծայրով հոր փորել էր : բայց այս հրաշալի գիւտիս միջոցաւ գիրքերուն առժանալովը, Աւարայի մէջ յետին աղքատուն ալ հարուստն ալ ընթերցասէր եւ ուսումնական ըլլալու կարող եղան . որ այնչափ ուսմանց գիւտեր եւ հարստութեան հազարաւոր անթիւ միջոցներ դտած են եւ կը դանան . եւ այս զարդացումը

զերուն հոգ տանի ու խնամէ նէ, միթէ իր ակնկալութեան չափ
 օգուտ կրնայ քաղել անկէջ, բնաւ երբէք չկրնար ապա ու-
 րեմն ամենէն առաջ այնպէս դպրոց մը բանալ պէտք է աղջ-
 կանց համար, որուն մէջի աշակերտները անանկ կերպով եւ
 դրութեամբ մը դաստիարակուին որ, իրենց ուսմունքը ըստ բա-
 ւականին կատարելագործուելէն ետեւ, ուրիշ բացուելիք
 աղջկանց դպրոցներու մէջ, մէյակի անճանաչելի քաջ ուսու-
 ջիւններ ըլլան, եւ ազգին օգտակար պտուղներ ընծայեն, սոր-
 վջընելով անոնց հայկաբանութիւն, ազգային պատմութիւն,
 կրօնական գիտութիւն, լեզուագիտութիւն եւ այլն, եւ կա-
 ռով տարուէ տարի մեծամեծ արգիւնքներ յառաջ գալով,
 այն տգէտ մայրերը անոնց ուսման եւ արուեստից քննու-
 թիւն ըլլալու ժամանակը հանդիսատես ըլլան նէ, չէ՞ որ իրենց
 սրտին մէջ ալ գիտութեան լոյսը կը ճառագայթէ եւ անոր
 յարգը կը ճանչնան ու կը միխթարուին. չէ՞ որ ազգն ինչէ՞ ազ-
 դասիրութիւն ինչ ըսել է անոնք ալ տեղեկակ կրլլան, եւ շատ
 բաներու վրայ ալ քիչ շատ տեղեկութիւն կ'առանան. ահաւա-
 րիկ այս ընտիր միջոցաւն է որ Եւրոպացւոց մէջ ուսումնա-
 կանութիւնը եւ ընթերցասիրութիւնը ծագելեր է. որոնք գիրք
 մը տպուելու լուրը լսած ժամանակին, գէպ 'ի տպարան
 յաճախ երթեւեկութիւն ընելէն, գրանը շեմը (էջիկ) կը
 մաշեցնեն. անհամբերութեամբ կը հարցընեն թէ ե՞րբ կը լը-
 մենայ. մինչեւ անգամ տպագրատպեան ալ աշխատաւորներն ալ
 կը ճանճրացընեն. տիպը լմնալուսն պէս, սովի ժամանակ հա-
 ցադործին խանութէն հաց յափշտակելու պէս շատ անդամ
 անկազմ կառնեն կը տանին. ամէն շտրթու ամէն օր հազա-
 րաւոր միլիոնաւոր լրագիրներ կը տպուին ու կը հրատարա-
 կուին :

Թէ որ անոնց ընթերցասիրաց թիւը հաշուելու ըլլամք նէ,
 հարիւրին հինգ կամ տասը հոգի չենք կրնար գտնալ, որ իր
 օրը շաբաթը առանց կարդալու անցունէ : Բայց մեր չորս
 կամ հինգ միլիոն ազգին մէջի ընթերցասէրներուն թիւը լը-

քաղիւր հրատարակողներէն ստուգելով, շատէն շատ հազիւ
 թէ երկու հազարին մէկը օրագիր լրագիր եւ ուրիշ գիրքեր
 կարգացող կրնամք գտնալ. ըսել է որ՝ երկու հազար կամ եր-
 կու հազար հինգ հարիւր հոգի, երանի թէ սխալած ըլլամք
 ու հազար հոգի ալ աւելի ըլլայ. եւ ասոնք ալ երեք կարգ-
 են: Առաջինը՝ աւելի փափագով եւ հետաքրքրութեամբ ա-
 մենայն սիրով կը կարգայ: Երկրորդը՝ ուսումնականաց քով բո-
 լորովին տոգտ երեւնալը պատուոյն գպչելովը, ուսումնասի-
 րութեան հետամուտ կըլլայ՝ գիտնականաց կարգը անցնե-
 լու համար: Երրորդին համար՝ գիրքը լրագիրը աճուրդը
 (մեզաթ) ելլալով անարգութեան մատնուած ապրանքի մը
 նման կերեւայ իր աչքին. եւ կը մտածէ խոհեմութիւններ
 կը գործածէ որ, թէ արդեօք ստակ տնլու արժանի բան մըն
 է, թէ չէ, չըլլայ թէ պարապը դացած ըլլայ ստակը. վերջա-
 պէս շատերուն անոր տուած յարգութեան եւ խիստ օգտա-
 կար բան մը ըլլալուն ձայնէն շփոթած՝ կէսմը ինքզինքը խա-
 բած կարծելով, տուգանք մը վճարելու պէս ակամայ կամօք
 ձանձրացուցիչ կերպով ստակը կը վճարէ, կամ ըվճարելու հը-
 նարք մը կը մտածէ. թէ որ օրագրին կամ լրագրին վրան կամ
 մէջը իր անունը մնականունը տպուած ըլլայ նէ, այս բանը տը-
 ուած ստակին հասուցում մը համարելով, անով քիչ մը կը
 միլիթարուի:

Յիրաւի յայտնի է որ, շատ ցաւալի բան եւ նուաստու-
 թիւն մըն է մէր ազգին համար իրեն այս դանդաղեցայլ ըն-
 թացքը. բայց մէկ կողմանէ ալ մեծ ուրախութիւն եւ յոյս
 կրնծայէ՝ այն յառաջադիմութեան համար ունենցած բնական
 նախանձաւորութիւնը. որ միշտ բարին եւ օգտակարը ձեռք
 ձգելու հակամիտութիւն մը ունենալով, կը յուսացուի որ
 Պօլսոյ վեհանձն ուսումնական եւ հայրախնամ ազգասէրք,
 աղջկանց համար-գպրոցներու բանսլու օգուտը կզգան, եւ բո-
 լոր սրտիւ ի գործ դնելու կաշխատին. ինչպէս որ Հայաստա-
 նի երեւելի քաղաքներն ալ՝ օրինակներուն եւ փորձերուն
 նայելով եւ յորդորուելով, ընկերութիւններ կազմելով դպրոց-

ներ բացած են, եւ յառաջադիմութեան մէջ յարատեւ ջանք մը ունին . այն քաղաքներուն միջի եղող բարեջան եւ ազգասէր հոգաբարձուներէն ալ կը յուսացուի որ, աղջկանց համար զատ դպրոցներ բանան՝ եւ ուրիշներուն ալ օրինակ ըլլան :

Ահաւասիկ այս մէկ հատիկ միջոցաւն է որ՝ թէ որ ՚ի դործ դրուելու ըլլանէ, քիչ ժամանակէն ուսմունքը եւ ընթերցասիրութիւնը ընդհանուր ազգին մէջ պիտի սփռի ու տարածի . ինչպէս որ Գաղիացին Եւրոպայի բոլոր ազգաց լուսաւորութեան եւ յառաջադիմութեան օրինակ է, Հայկազունը ալ Ասիայի բոլոր ազգաց անշու՝ յառաջադիմութեան եւ քաղաքակրթութեան նախանձեղի օրինակ պիտի հանդիսանան :

Յիրաւի շատ ճշմարիտ է այն արեւելեան ազգաց ծանօթ իմաստախոհ Եւրոպացիին ըսածը թէ, այս ազգը ոչ տիրութիւն ունի եւ ոչ հարստութիւն, միայն թէ իր զարմանալի ջանասիրութեամբը եւ աշխատասիրութեամբը ինքնիրեն յառաջ կը քալէ :

Ահաւասիկ յայտնի է որ սոսկաւ հարիւրաւոր տարիներէ ՚ի վեր ազգերն իսկի սիրելի հայրենիքէն բաժնուեր հեռացեր օտար ազգաց եւ բոլորովին օտար տերութեանց քաղաքներու մէջ բնակեր են . բայց կը նայինք որ այս երջանիկ դարուս մէջ, ամէնն ալ աննախանձ եւ մասնաւոր ազգային սիրով մը մէկը զմէկու հետ հոգւով եւ սրտով միացած, եւ ընդհանուր միասնութեամբ տգիտութեան հետ պատերազմիլու սկսած են, որն որ Հայաստանի սահմաններէն բոլորովին դուրս վնասելէն ետեւ, գիտութեան իմաստութեան եւ երջանկութեան յաղթական դրօշակը Մասեաց կատարը պարծենալով պիտի կանգնեն :

ՏԻԳՐԱՆ . Կ . ԳԱԼՓԱԿՃԵԱՆ :

